



ՄԱՍՆԱԳԻՏԱԹՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԿԻՐԱՌԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթական ծրագիրը մշակվել է տվյալագիտության, կիրառական վիճակագրության, բիզնես վերլուծությունների ոլորտներում մեծ հեղինակություն վայելող ԱՄՆ և Եվրոպայի մի քանի տասնյակ առաջավոր համալսարանների հաջողված փորձի մանրակրկիտ վերլուծության, մեր իրողության պայմաններում դրա տեղայնացման, նաև՝ պոտենցիալ գործատու կազմակերպությունների պահանջարկի խորքային ուսումնասիրության արդյունքում:

### Ծրագրի տևողությունը

1.5 տարի

### Դասապրոցեր

շաբաթական 3 անգամ  
երկուսը՝ ժամը 18:20-ից,  
մեկը՝ շաբաթ օրն առավոտյան

### Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

### Որակավորում

վիճակագրության մագիստրոս



## առաջին կիսամյակ

### Մոդուլ 1

1. Տվյալների վերլուծության հիմունքներ
2. Տվյալների հավաքագրում և ներկայացում (Data Mining & Visualization)

### Մոդուլ 2.

1. Որոշումների կայացում տվյալների հիման վրա
2. Օպտիմալության տեսություն և գործառնությունների հետազոտություն

### Մոդուլ 3.

1. Տվյալների բազմաչափ վիճակագրական վերլուծություն
2. Կիրառական վիճակագրություն բիզնեսի համար -1

### Մոդուլ 4

**Գիտահետազոտական փորձառություն(10 շաբաթ)**

## Երկրորդ կիսամյակ

### Մոդուլ 5

1. Կիրառական վիճակագրություն բիզնեսի համար -2
2. Ժամանակային շարքերի վերլուծություն և կանխատեսում

### Մոդուլ 6

1. Մակրոտնտեսական վիճակագրություն
2. Ընտրանքային հետազոտությունների կազմակերպում և անցկացում

### Մոդուլ 7

#### Ընտրովի առարկաներ

- Հանրային քաղաքականության վիճակագրական վերլուծություն
- Բիզնես ռազմավարության վիճակագրական վերլուծություն և գնահատում
- Գործարար ռիսկերի վիճակագրական վերլուծություն
- Որակական մեթոդները բիզնեսում

### Մոդուլ 8

1. Ֆինանսական և դրամավարկային վիճակագրություն
2. Միկրոտնտեսական վիճակագրություն

#### Ընտրովի դասընթացներ

- Աշխարհագրական և տարածական վերլուծություն (GIS համակարգերի կիրառմամբ)
- Վիճակագրական փաթեթների կիրառմամբ վերլուծության արդի ուղղություններ



## ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

## Երրորդ կիսամյակ

### Մոդուլ 9

**Գիտամանկավարժական փորձառություն (6 շաբաթ)**

### Մոդուլ 10

Մագիստրոսական թեզ





## Արմեն Քաչատրյան

Կրթական ծրագրի ղեկավար

LinkedIn հարթակում անձնական էջի [հղումը](#)

Վիճակագրության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Ունի դասախոսական աշխատանքի ավելի քան 15 տարվա փորձ: Որպես փորձագետ ներգրավվել է Համաշխարհային բանկի, Եվրամիության, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի, տարբեր պետական գերատեսչությունների հետազոտական ծրագրերում և նախագծերում: ՀՀ պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի անդամ է, նաև՝ Ֆասթ Կրեդիտ վարկային կազմակերպության խորհրդի անդամ:

## Անուշ Շիրինյան

LinkedIn հարթակում անձնական էջի [հղումը](#)



Վիճակագրության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու: Ունի ավելի քան 10 տարվա դասախոսական աշխատանքի փորձառություն, մասնագիտական հետաքրքրությունները ներառում են մաթեմատիկական վիճակագրությունը, բիզնես ոլորտում որոշումների կայացման վիճակագրական մեթոդները: Ներգրավված է մի շարք հետազոտական նախագծերում: Դասավանդում է նաև Հայաստանի եվրոպական համալսարանում:

## Եվգենյա Բազինյան

LinkedIn հարթակում անձնական էջի [հղումը](#)



Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Ունի դասախոսական աշխատանքի ավելի քան 18 տարվա փորձառություն: Մասնագիտական հետաքրքրության շրջանակը ներառում է մեքենայական ուսուցման, էկոնոմետրիկ մոդելավորման, ֆինանսական շուկաներում մաթեմատիկական մոդելների կիրառության, ժամանակային շարքերի տնտեսամաթեմատիկական վերլուծության խնդիրները:







## Ելենա Մանուկյան

LinkedIn հարթակում անձնական էջի [հղումը](#)



## ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու: Ունի դասախոսական աշխատանքի շուրջ 25 տարվա փորձ: Որպես հետազոտող ներգրավված է եղել Ասիական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության, այլ գերատեսչությունների ամենատարբեր հետազոտական ծրագրերում, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի խորհրդի անդամ է: Մասնագիտական հետաքրքրությունները ներառում են մակրոտնտեսական մոդելավորման, օպտիմալության տեսության և գործառնությունների հետազոտության, խաղերի տեսության, էկոնոմետրիկայի և տվյալների վերլուծության տեսական ու գործնական խնդիրները:

## Տիգրան Կոստանյան

LinkedIn հարթակում անձնական էջի [հղումը](#)



Եվրասիական զարգացման բանկի բյուջետային աջակցության վարկերի նախագծային խմբի տնօրենն է: 2009–2015թթ. որպես տնտեսագետ աշխատել է Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակում, մինչ այդ, շուրջ մեկ տասնամյակ, աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարությունում, որից 2006–2009թթ. զբաղեցրել է նախարարության Մակրոտնտեսական ծրագրավորման բաժնի պետի պաշտոնը:

## Դիանա Աֆյան

LinkedIn հարթակում անձնական էջի [հղումը](#)



2003թ. –ից մինչ օրս աշխատում է ՀՀ Կենտրոնական բանկում: 2018–ից ղեկավարում է Վիճակագրության վարչության Ընտրանքային հետազոտությունների և վերլուծությունների բաժինը: Մասնակցել է մեկ տասնյակից ավելի մասնագիտական վերապատրաստումների, միջազգային կոնֆերանսների, սեմինարների՝ ԱՄՆ–ում, ՄԵԾ Բրիտանիայում, Գերմանիայում: Մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասավանդում է «Ընտրանքային հետազոտությունների կազմակերպում և անցկացում» դասընթացը:



## Թովմաս Թովմասյան



2012-ից մինչ օրս աշխատում է ՀՀ Կենտրոնական բանկում: Ներկայումս ռիսկերի կառավարման դեպարտամենտի աշխատակից է: Մասնակցել է մեկ տասնյակից ավելի վերապատրաստումների՝ Գերմանիայի Բունդեսբանկում, Նյու Յորքի Դաշնային պահուստային բանկում, Վիեննայի միացյալ ինստիտուտում, Ֆրանսիայի բանկում, Նիդեռլանդների կենտրոնական բանկում և այլուր: Ծրագրի շրջանակներում դասավանդում է «Գործարար ռիսկերի վիճակագրական վերլուծություն» դասընթացը:

## Մարգարիտա Փանոյան

LinkedIn հարթակում անձնական էջի [հղումը](#)



Աշխատում է ՀՀ Կենտրոնական բանկում: 2016-2018թթ. ներգրավվել է ԿԲ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության աշխատանքներում, ներկայումս՝ Գործառնությունների և ռազմավարության խորհրդատու է: Մասնագիտական կրթությունը ստացել է Բրյուսելում, մինչ Կենտրոնական բանկում աշխատանքի անցնելը՝ 2009-2015թթ. Տնտեսագիտության և վիճակագրության առաջատար հետազոտությունների եվրոպական կենտրոնում աշխատել է որպես վիճակագրության և էկոնոմետրիկայի հետազոտող-վերլուծաբան: Մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասավանդում է «Բիզնես ռազմավարության վիճակագրական վերլուծություն և գնահատում» դասընթացը:

## ԳՈՐԾԸՆԿԵՐ- ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ



CENTRAL BANK  
OF ARMENIA

ՀՀ Վիճակագրական  
կոմիտե



## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Մագիստրոսական ծրագրի յուրացման արդյունքում ձևավորված գիտելիքն ու վերջնարդյունքները կարող են կիրառվել ամենատարբեր ոլորտներում, հանրային ու մասնավոր ընկերություններում, ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպություններում: Ծրագրի շրջանավարտները ձեռք կբերեն աշխատանքի շուկայում պահանջված և մրցունակ մասնագիտություն:

Հայաստանյան աշխատաշուկայում մեծ պահանջարկ վայելող և բարձր վարձատրվող աշխատանքների զգալի մասի հիմքում հենց տվյալների հետ աշխատելու, վերլուծելու կարողությունն է: Մեր թվային դարաշրջանում տվյալների վերլուծաբանի մասնագիտական ծառայություններն այլընտրանք չունեն:





**Ողջույն, Ես Աննան եմ:**

2016 թվականին գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ հաշվապահական հաշվառում և աուդիտ ֆակուլտետը և անմիջապես ընդունվել ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ներկայիս ԿԳՄՍՆ): 2020 թվականին տեսնելով մագիստրոսական 1,5 տարի տևողությամբ ծրագիրը և համոզված լինելով, որ կրթությունս անհրաժեշտ է շարունակել, դիմել եմ կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն ծրագրին և շնորհիվ եկամտային հարկի հետվերադարձի օրենքի, սովորել եմ անվճար և գերազանցությամբ ավարտել եմ: Ուսումնառության ընթացքում սովորել եմ ներկայումս մեծ պահանջարկ վայելող ծրագրեր, և ստացել եմ բազային գիտելիքներ:

**Ներկայումս աշխատում եմ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում** և փորձում եմ կատարելագործել ստացածս գիտելիքները: Միանշանակ խորհուրդ կտամ օգտվել այս ծրագրի ընձեռած հնարավորություններից և ևս մեկ ներդրում կատարել «ամենաթանկարժեք» ոլորտում:

**Ողջույն, Ես Տաճատն եմ:**

Ավարտել եմ ՀՊՏՀ Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի “Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն” մասնագիտացման մագիստրատուրան:

**Այժմ աշխատում եմ Հայաստանում կլինիկական ոլորտում հետազոտություններ իրականացնող առաջատար հանդիսացող «The Gurus» ընկերությունում` որպես Mid-level Statistical Programmer:**  
Ուսումնառությանս 1.5 տարվա ընթացքում կարողացել եմ համատեղել աշխատանքիս հետ և մասնագիտական ոլորտում բարելավել եմ գործնական գիտելիքներս, որոնք օգտագործում եմ իմ աշխատանքային գործունեության մեջ:





**Ողջույն, Ես Տիգրանն եմ:**



2022 թ. գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ "Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն" մագիստրոսական ծրագիրը: 1,5 տարվա ընթացքում ստացել եմ հիմնարար գիտելիք վիճակագրական վերլուծական մեթոդների և գործիքների վերաբերյալ, առկա տեսական գիտելիքներս ամրապնդել եմ վերլուծական գործիքակազմով:

Ծրագրի ընթացքում դասընթացներն անց են կացվել երեկոյան ժամերին՝ հնարավորություն ընձեռելով կրթությունը համատեղել աշխատանքի հետ: Նշված առավելություններին ի հավելումն կցանկանայի ընդգծել դասախոսական կազմի պրոֆեսիոնալիզմը և պատրաստական վերաբերմունքը: Շնորհակալություն ՀՊՏՀ-ին ուսանողների հույսերը հերթական անգամ արդարացնելու համար:

**Բարև, Ես Անին եմ:**

Աշխատում եմ Ամերիաբանկում: Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն ծրագիրը ինձ հնարավորություն տվեց ոչ միայն համատեղել ուսումնա աշխատանքի հետ, այլ նաև պետական ծրագրի շրջանակներում լիովին անվճար ստանալ լիարժեք բարձրագույն կրթություն, որն արդյունքում նպաստեց կարիերայիս աճին և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական ասպեկտներով:



Այս ծրագիրն ինձ հնարավորություն տվեց առավելագույնս արդյունավետ օգտագործել ինձ համար ամենաթանկ ռեսուրսը՝ ժամանակը, ուստի բոլոր նրանք, ովքեր գնահատում են իրենց ժամանակը և չեն ուզում այն վատնել միայն տեսական գիտելիքների ձեռքբերման վրա, այլ կարևորում են գործնական հմտությունների ձեռքբերման հնարավորությունը՝ անհապաղ, առանց երկմտելու դիմեք: